

## I. Ընդհանուր դրույթներ

1. «Մենք իրավաբանական, խորհրդատվական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ ՍՊԸ) օգտագործում է armnic.com կայքը (այսուհետ նաև՝ Կայքը): Մենք պարտավորվում ենք պաշտպանել և հարգել մեր օգտատերերի (այսուհետ նաև՝ Ձեր) անձնական տվյալների պաշտպանությունը, գաղտնիությունը և ապահովել դրանց անվտանգությունը Կայքում հրապարակված և Կայքի Ընդհանուր դրույթներով և պայմաններով սահմանված ծառայությունները (այսուհետ նաև՝ Ծառայություններ) մատուցելիս: Սույն քաղաքականության նպատակն է տեղեկատվություն տրամադրել Ձեզ այն մասին, թե մեր Կայքից օգտվելու արդյունքում անձնական տվյալների հավաքման, օգտագործման, հրապարակման կամ այլ կերպ մշակման, ինչպես նաև այդ տվյալների առնչությամբ Ձեր ունեցած իրավունքների վերաբերյալ ինչպիսի քաղաքականություն է վարում ՍՊԸ-ն:
2. Մենք մշակում ենք Ձեր անձնական տվյալները մեր Ծառայությունները մատուցելու և դրանք կատարելագործելու նպատակով: Օգտվելով Ծառայություններից՝ Դուք համաձայնում եք մեր կողմից, սույն քաղաքականությանը համապատասխան, Ձեր տվյալների հավաքմանը, օգտագործմանը կամ այլ կերպ մշակմանը: Ձեր անձնական տվյալները երկրորդային նպատակներով օգտագործելու դեպքում համաձայնություն ստանալու համար մենք անմիջականորեն կդիմենք Ձեզ՝ ապահովելով հրաժարվելու հնարավորությունը:
3. Սույն քաղաքականության մեջ օգտագործված հասկացությունները.
  - 3.1. **Ռեգիստր**՝ վերին մակարդակի դոմենային անունների տիրույթները կառավարող կազմակերպություն:
  - 3.2. **Ռեգիստրար**՝ armnic.com:
  - 3.3. **Գրանցող**՝ քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտ, որը Ռեգիստրարի միջոցով Ռեգիստրի տվյալների շտեմարանում գրանցել է (վերագրանցել է) դոմենային անունների տիրույթի երկրորդ մակարդակի դոմենային անուն (օրինակ՝ «armnic.com») կամ «.com.am», «.co.am», «.org.am», «.net.am», «.commune.am», «.համայնք.հայ» երրորդ մակարդակի դոմենային որևէ անուն (օրինակ՝ «armnic.com.am» կամ «armnic.net.am»):
  - 3.4. **Կայքի այցելու**՝ յուրաքանչյուր ոք, ով մուտք է գործում Կայք և օգտագործում է այն որոշակի նպատակով:
  - 3.5. **Անձնական տվյալ**՝ անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:
  - 3.6. **Անձնական տվյալների մշակումը**՝ անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց) ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է Գրանցողի կամ Կայքի այցելուի անձնական տվյալները հավաքելու, ամրագրելու, մուտքագրելու, համակարգելու, կազմակերպելու, պահպանելու, օգտագործելու, վերափոխելու, վերականգնելու, ոչնչացնելու կամ ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործողությունների կատարումն է:
  - 3.7. **Ծառայություններ**՝ Ռեգիստրարի կողմից մատուցվող ծառայությունները, որոնց առանձին նկարագրության և մատուցման պայմանների մասին ներկայացված են Կայքի Ընդհանուր դրույթներում և պայմաններում:
  - 3.8. **Ռեգիստրի տվյալների շտեմարան**՝ դոմենային անունների տիրույթներում գրանցված դոմենային անունների մասին շտեմարան, որը պարունակում է սույն

քաղաքականության 7-րդ կետով սահմանված տեղեկությունները, ինչպես նաև այլ պարտադիր տեղեկատվություն, որն անհրաժեշտ է դոմենային անունների աշխատունակությունն ապահովելու համար:

- 3.9. «Whois» ծառայությունը՝ Ռեգիստրի տվյալների շտեմարանից հանրության համար հասանելի փնտրման համակարգի միջոցով դոմենային անվան մասին տեղեկատվության տրամադրում:
- 3.10. **Երրորդ անձ**՝ ցանկացած անձ, մարմին, հիմնարկ կամ կազմակերպություն, որը չի հանդիսանում տվյալների սուբյեկտ, անձնական տվյալների մշակող կամ լիազորված անձ, և որի իրավունքները կամ օրինական շահերը շոշափվում կամ կարող են շոշափվել անձնական տվյալները մշակելու արդյունքում:
- 4. Ձեր անձնական տվյալների վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում խնդրում ենք դիմել մեր անձնական տվյալների պաշտպանության աշխատակցին [info@mengconsulting.am](mailto:info@mengconsulting.am) էլեկտրոնային հասցեով:

## II. **Գրանցողի տրամադրած տվյալների մշակումը դոմենային անվան գրանցումն իրականացնելիս**

- 5. Դոմենային անվան գրանցումն իրականացնելիս Ռեգիստրարն իրավասու է հավաքել, մուտքագրել կամ կատարել այլ գործողություններ Գրանցողի անձնական տվյալների հետ ու փոխանցել դրանք Ռեգիստրին:
- 6. Դոմենային անվան գրանցումն իրենից ներկայացնում է Ռեգիստրի տվյալների շտեմարանում դոմենային անվան և դոմենային անվան աշխատունակությունն ապահովելու համար սույն քաղաքականության 7-րդ կետում նշված տեղեկությունների մուտքագրում, հաստատում և գրանցման համար անհրաժեշտ այլ գործողությունների կատարում:
- 7. Դոմենային անվան մուտքագրման հետ միաժամանակ, դոմենային անվան աշխատունակությունն ապահովելու համար, Ռեգիստրի տվյալների շտեմարանում մուտքագրվում են հետևյալ տեղեկությունները՝
  - 7.1. տվյալ դոմենային անվան Գրանցող դառնալու ցանկություն ունեցող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հաշվառման կամ բնակության վայրը (հասցեն), փոստային ինդեքսը,
  - 7.2. տվյալ դոմենային անվան Գրանցող դառնալու ցանկություն ունեցող՝ ֆիզիկական անձ չհանդիսացող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտի անվանումը, գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն), փոստային ինդեքսը, իրավաբանական անձ հանդիսանալու դեպքում՝ կազմակերպաիրավական ձևը, այլ սուբյեկտ հանդիսանալու դեպքում՝ իրավական կարգավիճակը,
  - 7.3. տվյալ դոմենային անվան Գրանցող դառնալու ցանկություն ունեցող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտի վարչական, տեխնիկական և ֆինանսական կոնտակտների տվյալները (անուն, ազգանուն, էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոսահամար): Ընդ որում, տվյալ դոմենային անվան Գրանցող դառնալու ցանկություն ունեցող ֆիզիկական անձի դեպքում մուտքագրվում են այդ ֆիզիկական անձի տվյալները, եթե վերջինս օրենքով սահմանված կարգով չի լիազորել այլ անձի (անձանց) հանդես գալու որպես իր վարչական, տեխնիկական և ֆինանսական կոնտակտ:
- 8. Ռեգիստրարի մատուցած Ծառայություններից օգտվելու համար Գրանցողը պարտավորվում է Ռեգիստրարին ներկայացնել սույն քաղաքականության 7-րդ կետով նշված անձնական տվյալները:

9. Գրանցորդի կողմից Ռեգիստրարի մատուցած Ծառայություններից օգտվելու և Ռեգիստրարի կողմից գրանցված դոմենային անվան աշխատունակությունն ապահովելու համար սույն քաղաքականության 7-րդ կետով պահանջվող տվյալների տրամադրումը, փոխանցումը ներկայացնում է Գրանցորդի, ինչպես նաև իր վարչական, ֆինանսական և տեխնիկական կոնտակտների համաձայնությունները այդ տվյալները Ռեգիստրին տրամադրելու վերաբերյալ:
10. Գրանցորդի պահանջով սույն քաղաքականության 7-րդ կետով սահմանված տվյալները կարող են չիրապարակվել «Whois» ծառայության մեջ:
11. Սույն քաղաքականության 7-րդ կետով պահանջված տվյալների տրամադրումն նպատակաուղղված է Ռեգիստրարի Ծառայությունների ստացմանը և այդ տեղեկությունների չտրամադրումը կամ թերի տրամադրումը հիմք են մեզ համար Ծառայությունների մատուցումը մերժելու համար:
12. Գրանցորդի անձնական տվյալները Ռեգիստրի տվյալների շտեմարանում պահպանվում են մինչև Ռեգիստրի տվյալների շտեմարանում գրանցված դոմենային անվան պահպանման ժամկետի (այսուհետ նաև՝ **Պահպանման ժամկետ**) լրանալը, որը կազմում է՝ ոչ պակաս քան մեկ տարին մինչև դոմենային անվան օգտագործման ժամկետի և Ռեգիստրի տվյալների շտեմարանում դոմենային անվան պահպանման համար սահմանված լրացուցիչ ժամկետի (այսուհետ նաև՝ **Լրացուցիչ ժամկետ**) լրանալը, որը կազմում է 45 օր:
13. Տվյալ դոմենային անունը և դրա Գրանցորդի անձնական տվյալները վաղաժամկետ հեռացվում են Ռեգիստրի տվյալների շտեմարանից (դադարեցվում է Պահպանման ժամկետը) դոմենային անվան գրանցումը (կամ վերագրանցումը) Կայքի Ընդհանուր դրույթներով և պայմաններով սահմանված հիմքերով Ծառայությունների մատուցման կամ ստացման դադարեցման դեպքում:
14. Ռեգիստրարի կողմից Ռեգիստրի տվյալների շտեմարանում դոմենային անվան գրանցման դեպքում Ռեգիստրարը պատասխանատվության չի կրում այդ գրանցումների, այդ թվում նաև՝ Գրանցորդի կողմից ներկայացված տվյալների իսկության համար և պարտավոր չէ ստուգել այդ տվյալների իսկությունը:

### **III. Գրանցորդի և Կայքի այցելուների վերաբերյալ անձնական այլ տվյալների մշակումը**

15. Մենք կարող ենք նաև հավաքել՝
  - 15.1. մեր կայքի այցելությունների մանրամասների և համացանցային հաղորդակցությունների վերաբերյալ տվյալներ,
  - 15.2. տեխնիկական տեղեկություններ այն մասին, թե ինչպես եք օգտվում մեր Ծառայություններից, մասնավորապես, ինչ սարքով և բրաուզերով եք մուտք գործում մեր կայք,
  - 15.3. վճարային տեղեկատվություն և կայքի միջոցով իրականացվող գործարքների մանրամասները, այդ թվում՝ Ձեր վճարումների վերաբերյալ;
  - 15.4. մեր կամ մեր աշխատակցի հետ հաղորդակցությունը, օրինակ՝ զանգերը, նամակները,
  - 15.5. Ձեր տեղակայման, այդ թվում IP հասցեի, ինչպես նաև շարժի վերաբերյալ տեղեկատվություն,
  - 15.6. ցանկացած լրացուցիչ տեղեկություն, որը կտրամադրեք մեզ մեր կայքի միջոցով («Web beacon», «Cookie» գործիքների միջոցով ստացվող տվյալներ): Մանրամասն տեղեկատվության համար խնդրում ենք ծանոթանալ մեր «Cookie»-ների և այլ տեխնոլոգիաների կիրառման քաղաքականությանը XI-րդ բաժնում:

15.7. որոշ դեպքերում կարող ենք նաև պահանջել անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը, հասցեի կամ այլ տվյալի վերաբերյալ ապացույց:

**IV. Անձնական տվյալները մշակելու իրավական հիմքը**

16. Անձնական տվյալներ մշակողը պարտավորվում է հետևել և ապահովել, որ տվյալները մշակվեն ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

17. Ձեր անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց Ձեր համաձայնության դրանք չեն կարող օգտագործվել երկրորդային նպատակներով:

18. Ձեր անձնական տվյալների մշակումն օրինական է, եթե՝

18.1. տվյալները մշակվել են ՀՀ օրենսդրությանը համապատասխան և եթե դուք տրամադրել եք Ձեր համաձայնությունը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

18.2. մշակվող տվյալները ձեռք են բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից:

**V. Անձնական տվյալների գաղտնիության ռեժիմը և մշակման անվտանգությունը**

19. ՍՊԸ-ին հայտնի դարձած Ձեր անձնական տվյալների վերաբերյալ տեղեկատվությունը հանդիսանում է գաղտնի և պաշտպանված է օրենքով:

20. Ձեր անձնական տվյալները պաշտպանելու համար ՍՊԸ-ն նախատեսում է պաշտպանության համար բավարար տեխնիկական և կազմակերպչական միջոցառումներ. մասնավորապես՝

20.1. Ձեր անձնական տվյալները պաշտպանելու համար մենք ձեռնարկում ենք ողջամիտ քայլեր և հետևում՝ ոլորտի լավագույն փորձին՝ դրանց անօրինական օգտագործումից, հասանելությունից, հարապարակումից, փոփոխումից, ոչնչացումից կամ այլ միջամտությունից կանխելու և ապահովելու համար: Անմիջականորեն Ձեզնից ստացված բոլոր անձնական տվյալները մենք պահեստավորում ենք տվյալների բազայում կոդավորված և գաղտնաբառով պաշտպանված վիճակում: Տվյալների բազան իր հերթին գտնվում է մեր խիստ պաշտպանված ցանցի սահմաններում:

20.2. Մեր աշխատակիցները և Ձեր անձնական տվյալները մշակելու իրավունք ստացած այլ անձինք ստորագրել են տեղեկատվության գաղտնիության պահպանման, չիրապարակման մասին պարտավորություն, ինչպես նաև զգուշացվել են անձնական տվյալների մշակման ոլորտում գործող օրենսդրության նորմերի և պահանջների խախտման դեպքում հնարավոր կարգապահական, վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվության մասին:

**VI. Անձնական այլ տվյալների մշակման նպատակը**

21. Ձեր անձնական այլ տվյալները մշակում ենք հետևյալ նպատակներով.

21.1. մեր Ծառայությունները մատուցելու և պահպանելու,

21.2. Ծառայությունների փոփոխությունների մասին տեղեկացնելու,

21.3. Ձեր էջի գործունակությունը ապահովելու,

21.4. իրավական պարտավորությունների կատարումն ապահովելու,

21.5. Ձեր կողմից առցանց գործարքներն իրականացնելու,

21.6. մեր հաճախորդներին և Կայքի այցելուներին աջակցություն տրամադրելու,

21.7. մեր Ծառայությունները բարելավելու համար վերլուծություն կամ արժեքավոր տեղեկություններ հավաքելու,

21.8. մեր Ծառայության օգտագործումը վերահսկելու,

21.9. տեխնիկական հարցերի հայտնաբերման, կանխարգելման և լուծման,

21.10. Կայքի պատշաճ գործունակությունն ապահովելու, բարելավելու,

21.11. Ձեզ նորություններ, հատուկ առաջարկներ և այլ ապրանքների, ծառայությունների և իրադարձությունների մասին ընդհանուր տեղեկատվություն տրամադրելու, քանի դեռ չէք հրաժարվել հիշյալ տեղեկությունները ստանալուց:

**VII. Գրանցողի և Կայքի այցելուների անձնական տվյալների փոխանցումը երրորդ անձանց**

22. Մեր ծառայությունները մատուցելու կապակցությամբ մենք օգտվում ենք որոշ վստահելի երրորդ կազմակերպությունների ծառայություններից: Դրանք մասնավորապես ապահովում են մեր Կայքի աշխատանքը, բանկային և վճարային ծառայությունների տրամադրումը, ինքնության ստուգումը և ռիսկերի կառավարումը: Վերջիններիս կապակցությամբ մեզանից կարող է պահանջվել այդ կազմակերպություններին փոխանցել Ձեզ վերաբերելի որոշ տվյալներ: Ընդ որում դրանք կարող են գործունեություն ծավալել մեր տեղակայման երկրի սահմաններից դուրս:
23. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով նախատեսված դեպքում և կարգով ներկայացած պահանջի, ինչպես նաև մեր իրավական պարտավորություններից ելնելով Ձեր տվյալները կարող են փոխանցվել այդ մարմիններին:
24. ՍՊԸ-ի սեփականատիրոջ փոփոխության, վերակազմակերպման կամ այլ իրադարձության դեպքում, որը կհանգեցնի Ձեր տվյալների փոխանցմանը այլ անձի, այդ մասին Ձեզ կտեղեկացնենք էլ.փոստի կամ մեր կայքում համապատասխան ծանուցում հրապարակելու միջոցով՝ պարզաբանելով տվյալների նոր մշակողի ինքնությունը և անձնական տվյալների կապակցությամբ Ձեր ընտրության հնարավորությունները:
25. Մեր Կայքը կարող է պարունակել հղումներ՝ երրորդ կազմակերպությունների կայքերին կամ կայքերից: Խնդրում ենք նկատի ունենալ, որ այդ կայքերը կարող են ունենալ իրենց գաղտնիության քաղաքականությունը, և մենք որևէ պատասխանատվություն չենք կրում դրանց համար: Նախքան որևէ անձնական տվյալ փոխանցելը խնդրում ենք մանրամասն ուսումնասիրել տվյալ քաղաքականությունները:

**VIII. Անձնական տվյալների հրապարակումը**

26. Ձեր անձնական տվյալները կարող են հրապարակվել այն դեպքում, երբ դա ողջամտորեն անհրաժեշտ է՝
- 26.1. իրավական պարտավորությունների կատարման համար,
  - 26.2. ՍՊԸ-ի իրավունքները և սեփականությունը պաշտպանելու համար,
  - 26.3. Ծառայությունների հետ կապված հնարավոր խախտումները կանխելու կամ քննելու համար,
  - 26.4. Ծառայություններից օգտվողների, Կայքի այցելուների կամ հասարակության անվտանգության ապահովման համար,
  - 26.5. իրավական պատասխանատվությունից պաշտպանվելու համար,
  - 26.6. Ձեր համաձայնության առկայության դեպքում նաև այլ նպատակներով:

**IX. Անձնական տվյալների պահպանումը**

27. ՍՊԸ-ն տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում, և Ձեր անձնական տվյալները պահպանվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
28. Երրորդ անձանց հետ աշխատելու հանգամանքով պայմանավորված՝ Ձեր տվյալները կարող են փոխանցվել և պահվել ՀՀ տարածքից դուրս գտնվող վայրերում: Դրանք կարող են նաև մշակվել ՀՀ-ից դուրս գործող աշխատակիցների կողմից, ովքեր աշխատում են մեզ կամ մեզ հետ համագործակցող կազմակերպության համար: Նման անձնակազմը կարող է ներգրավվել, ի թիվս այլնի, հաճախորդների սպասարկման, վճարման մանրամասների մշակման և ռիսկերի կառավարման համար:

29. Մենք երաշխավորում ենք, որ առկա է համապատասխան պայմանագրային վերահսկողություն ցանկացած երրորդ անձի նկատմամբ, որն աջակցում է մեզ անձնական տվյալների մշակման հարցում: Այսպիսով՝ Ձեր իրավունքները և անձնական տվյալների գաղտնիությունը երաշխավորված են:
30. Ձեր տվյալները կպահվեն այնքան ժամանակ, քանի դեռ Դուք օգտվում եք մեր ծառայություններից: Կայքի Ընդհանուր դրույթներով և պայմաններով սահմանված դեպքերում Ծառայությունները դադարեցվելու պարագայում, Ձեր անձնական տվյալները կպահպանվեն մեր համակարգերում և կմշակվեն այնքան ժամանակ և այն ծավալով, որքան օբյեկտիվորեն անհրաժեշտ է տվյալներ մշակելու համար նախատեսված նպատակներն իրականացնելու համար, Ձեր համաձայնությամբ սահմանված ժամկետով, կամ մեր իրավական պարտավորությունները կատարելու, վեճերը լուծելու և մեր իրավական պայմանագրերը կիրառելու համար:

#### **X. Ձեր իրավունքները**

31. Ձեր հիմնական իրավունքներն են՝
- 31.1. նախկինում տրված համաձայնությունը հետ վերցնելը, սակայն դա չի կարող հանգեցնել նախկինում համաձայնեցված մշակման անվավերության,
  - 31.2. մուտք գործել Ձեր անձնական տվյալներ, որոնք մենք մշակում ենք,
  - 31.3. պահանջել ուղղել Ձեր անձնական տվյալները, որոնք սխալ են կամ ժամկետանց,
  - 31.4. պահանջել ոչնչացնել ցանկացած անձնական տվյալ, որը մենք մշակել ենք, եթե այդ անձնական տվյալն ամբողջական կամ ճշգրիտ չէ կամ հնացած է, և եթե այլ բան նախատեսված չէ գործող օրենսդրությամբ,
  - 31.5. դիմել Ձեր անձնական տվյալների որոշակի մասը Ձեզ կամ Ձեր կողմից ընտրված ընկերությանը տրամադրելու համար,
  - 31.6. առարկել տվյալների մշակման դեմ, երբ մեր կողմից այդ մշակումը կատարվում է մեր իրավաչափ շահերից ելնելով,
  - 31.7. վիճարկել ավտոմատացված մշակման միջոցով կայացված որոշումը, արտահայտել Ձեր տեսակետը և պահանջել, որ այն վերանայվի,
  - 31.8. բողոք ներկայացնել տվյալների պաշտպանության համապատասխան մարմիններ:
32. Ընդգծենք, որ հիշյալ իրավունքները բացարձակ չեն և պահանջների նկատմամբ կիրառելի են համապատասխան իրավական կարգավորումներ:
33. Ձեր իրավունքների մասին հավելյալ տեղեկություն ստանալու համար կարող եք դիմել [info@menqconsulting.am](mailto:info@menqconsulting.am) էլեկտրոնային հասցեով:

#### **XI. «Cookie» և այլ տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ քաղաքականություն**

34. «Cookie»-ները տեքստային ֆայլեր են, որոնք պարունակում են փոքր քանակությամբ տեղեկություններ, որոնք ներբեռնվում են Ձեր սարքում, երբ այցելում եք կայք: Դրանք հիմնականում օգտագործվում են մեծաթիվ կայքերի կողմից՝ Ձեր առցանց փորձառությունը բարելավելու և հավաստիանալու, որ կայքի բովանդակությունն ու գործառույթները մատուցվում և օգտագործվում են արդյունավետորեն:
35. «Cookie»-ները իրականացնում են տարբեր գործառույթներ: Օրինակ, որոշները պահպանվում են Ձեր համակարգչում միայն մեր Կայք այցելելու ժամանակահատվածում: Այցելության վրա հիմնված «cookie»-ները թույլ են տալիս տեղաշարժվել մեր Կայքում ավելի արագ կամ հնարավորություն են տալիս Կայքին հիշել Ձեր նախընտրությունները: Մշտական «cookie»-ները օգտագործվում են նրա համար, որ կայքերը հիշեն Ձեզ որպես վերադարձող այցելու կամ ապահովեն Ձեր կոնկրետ կարիքներին և շահերին համապատասխանող առցանց գովազդների տրամադրումը:

36. Մեր Կայքում մեր կամ մեր գործընկերների կողմից «cookie»-ների օգտագործման հիմնական նպատակներն են հնարավորություն ընձեռել Ձեզ ինչպե՛ս ժամանակ և հեշտացնել հետագա մուտքը Կայք, բացահայտել, թե ինչպե՛ս են անձինք տեղաշարժվում մեր Կայքում, մեր ծառայությունը, Կայքի բովանդակությունը և մեր հաղորդակցության արդյունավետությունը բարելավելու համար և այլ համանման նպատակներով:
37. Մեր Ծառայություններից օգտվելով՝ համաձայնում եք, որ ՍՊԸ-ն ժամանակ առ ժամանակ կարող է Ձեր սարքում «cookie»-ներ տեղադրել՝ տեղեկություններ (օրինակ՝ օգտագործողի անունը, անձնական այլ մանրամասները, Էլ. փոստի հասցեն, տեխնիկական սարքի տվյալները, մասնավորապես՝ մոդելը և դրա IP հասցեն) պահպանելու, մեր Կայքի ֆունկցիոնալությունը և ծառայություններն ամբողջական շահագործելու և Ձեր բրաուզերին Ձեզ՝ որպես օգտագործող ճանաչելու հնարավորություն ապահովելու համար: Այն հնարավորություն կտա յուրաքանչյուր անգամ Կայք մուտք գործելիս կրկին չրացնել նույն տեղեկությունները: Այս «cookie»-ները չեն կարող օգտագործվել Ձեր համակարգչում ծրագրեր վարելու կամ վիրուսներ փոխանցելու համար: «Cookie»-ները կարող են ընթերցվել միայն այն վեբ-սերվերի կողմից, որն այն տեղադրել է Ձեր սարքում:
38. Դուք ցանկացած ժամանակ հնարավորություն ունեք փոխել Ձեր բրաուզերի կարգավորումները՝ մեր կողմից օգտագործվող «cookie»-ները կամ դրանց մի մասն արգելափակելով: Վերջին դեպքում Կայքի գործառնությունները կամ դրանց մի մասը կարող են չգործել այնպես, ինչպես ծրագրված են եղել: Օրինակ, Դուք, հնարավոր է, չկարողանաք կատարել վճարումներ:
39. «Cookie»-ների վերաբերյալ մանրամասն տեղեկություն կարող եք գտնել [www.allaboutcookies.org](http://www.allaboutcookies.org) կայքում:
40. Մենք նաև կարող ենք օգտագործել «web beacon»-ներ առանձին կամ «cookie»-ների հետ համատեղ՝ մեր կայքի օգտագործման և/կամ Էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված նամակների նկատմամբ կատարված Ձեր գործողությունների վերաբերյալ տեղեկություններ հավաքելու նպատակով: «Web beacon»-ները պարզ Էլեկտրոնային պատկերներ են, որոնք կարող են ճանաչել Ձեր սարքերի վերաբերյալ որոշակի տեղեկություններ, ինչպես՝ «cookie» ֆայլերը, սակայն այս դեպքում երբ դուք «web beacon»-ներ օգտագործող կայք եք դիտում: Օրինակ՝ ՍՊԸ-ն կարող է «web beacon» տեղադրել Ձեզ ուղարկվող մարքեթինգային Էլեկտրոնային նամակում, որը ՍՊԸ-ին կծանուցի, երբ Դուք սեղմեք կայք մուտք գործելու կոճակը: ՍՊԸ-ն օգտագործում է «web beacon»-ներ որպեսզի գործարկի և բարելավի կայքի և Էլեկտրոնային հաղորդակցության գործունակությունը:

## **XII. Փոփոխությունների կատարումը սույն քաղաքականությունում**

41. ՍՊԸ-ն իրավասու է փոփոխություններ կատարել Գաղտնիության քաղաքականությունում: Քաղաքականության փոփոխված բովանդակությանը կարող եք ծանոթանալ Կայքում, որը մշտապես թարմացվում է:
42. Գաղտնիության քաղաքականության փոփոխությունները ուժի մեջ են մտնում նշված՝ «Թարմացված է» ամսաթվի դրությամբ, և փոփոխման ամսաթվից հետո Ձեր կողմից Ծառայությունների շարունակաբար օգտագործումը կդիտարկվի որպես համաձայնություն և այդ պայմանների ընդունում:

*Թարմացված է՝ 20.04.2021*

*Գաղտնիության քաղաքականության հայերեն լեզվով և այլ լեզուներով թարգմանված տարբերակների միջև անհամապատասխանությունների դեպքում գերակայում է հայերեն լեզվով տարբերակը:*